«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1340

«09» 09 2021 թ.

«ԱԶՈՒՌ» ՍՊ Ընկերության
տնօրեն՝ պարոն Ա.Երիջանյանին

Հարգելի պարոն Երիջանյան,

Համաձայն 2021 թվականի հունիսի 1-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «ԱԶՈՒՌ» ՍՊ /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված շինանյութի գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-29-ԵՊԲՀ» պայմանագրի Ձեր Ընկերությունը պարտավորվել է 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով երկու տեսակի ապրանքներ:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը լրացել է սույն թվականի հունիսի 20-ին: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 12.07.2021թ. գրավոր սահմանվել է նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 14.07.2021թ. ներառյալ, որի մասին Ձեզ պատշաճ ծանուցվել է: Սակայն, Ձեր Ընկերության կողմից մատակարարումը իրականացվել է միայն մեկ ապրանքատեսակի /թիվ 27-րդ չափաբաժնի/ մասով, իսկ մյուս՝ թիվ 26-րդ չափաբաժնի մասով պատասխանատու ստորաբաժանմանը բանավոր տեղեկացվել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-29-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 01.06.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-29-ԵՊԲՀ» պայմանագիրը թիվ 26-րդ չափաբաժնի մասով:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ **Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

<< ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ
Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ,0025, Երևան, Կորյունի փ.2, հեռ. 011-621000-216

թիվ ՄՀՎ/360

«5» 08 2021թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր պարոն Ա. Ա. Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Ազուռ» ՍՊԸ - ի միջև 2021 թվականի հունիսի -1 կնքված N «ԳՀԱՊՁԲ-2021/7-2-29-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում, վաճառողը պարտավոր էր պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև ս/թ հունիսի 20-ը ներառյալ մատակարարել վերը նշված պայմանագրում ներառված ապրանքները ըստ տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի: Սակայն ընկերության կողմից ապրանքները Պայմանագրում նշված ժամկետներում չի մատակարարվել: Մասնավորապես 26-րդ չափաբաժին (էլ. մալուխ 2x6մմ– 300 մետր և 27-րդ չափաբաժին՝ ցեմենտ – 15 000 կգ):

Պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 12-ին գրավոր սահմանվել է մատակարարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 2021 թվականի հուլիսի 14-ը ներառյալ և դրա մասին պատշաճ ծանուցվել է պայմանագիր կնքած Ընկերությանը: Ընկերությունը վերը նշված գրության արդյունքում մատակարարեց 27-րդ չափաբաժինը իսկ 26-րդ չափաբաժնի մասով բանավոր հրաժարվում է մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ ձեռնարկել միջոցներ խնդրի կարգավորման նպատակով:

Կից ներկայացված է 12.07.2021թ. գրության պատճենը:

Վարչության պետ՝ Ս.Գ.Բարոյան